ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2023 թվականի թիվ 59-Ա

ք. Երևան

«ՅՈՒՔՈՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2023 թվականի հունիսի 07-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ ***պարզեց.***

2023 թվականի հունիսի 07-ին Հանձնաժողով մուտքագրված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) դիմումում նշված է ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի պահանջի խախտման փաստի վերաբերյալ:

2023 թվականի հունիսի 07-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով Հեռարձակողը տեղեկացնում է, որ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությունը տեսալսողական ծրագրերի դասավորվածությունը կատարել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջի խախտմամբ՝ առաջնահերթությունը տալով «Արմենիա Պրեմիում» տեսալսողական ծրագրին:

Հեռարձակողը իր դիմումով հայտնել է նաև, որ ցանցային օպերատորը 0 թվանշանի ներքո հեռարձակում է «Արմենիա Պրեմիում» տեսալսողական ծրագիրը, որին հաջորդում է Հանրային հեռարձակողի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագիրը՝ 1 թվանշանի ներքո:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Հեռարձակողի դիմումը, 2023 թվականի հունիսի 07-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի հունիսի 09-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Ցանցային օպերատորը հարուցված վարչական վարույթի ընթացքում 2023 թվականի հունիսի 12-ին Հանձնաժողով է ներկայացրել հետևյալ գրավոր բացատրությունը.

«ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությունը բարձր է գնահատում Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից հեռարձակողների և օպերատորների խնդիրները լսելու և դրանց օպերատիվ ահազանգելու համար:

Ընկերության որդեգրած քաղաքականությունն է իր գործունեության մեջ բոլոր պետական մարմինների, կոնտրագենտների և բաժանորդների առջև բարձր պատասխանատվությամբ հանդես գալը և օրենքի տառին համապատասխան գործելը:

Սույնով ցանկանում ենք հայտնել, որ Ձեր գրությամբ մատնանշված խնդրի մասին Ընկերությունը քաջատեղյակ է և ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները այն կարգավորելու համար: Մասնավորապես, Ընկերությունը բանակցություններ է վարել «Արմենիա Պրեմիում» տեսալսողական ծրագիրը հեռարձակող «ԱՐՄԵՆԻԱ ԹԻ-ՎԻ» ՓԲ ընկերության հետ և կարգավորել է մատնանշված խնդիրը: Նշենք, որ սույն թվականի հունիսի 09-ին, ժամը 17:00-ից սկսած, Ընկերությունը հեռարձակումը սկսել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրից:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ գրությամբ մատնանշված խնդիրն արդեն իսկ կարգավորված է, խնդրում ենք Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել»:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2023 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ, Հեռարձակողը հայտնել է հետևյալը.

« «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից թույլ տրված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 44-րդ հոդվածի պահանջի խախտումը, որը վերաբերում էր տեսալսողական ծրագրերի հերթականության դասավորվածությանը, վերացվել է:

Ուստի, ներկա պահի դրությամբ, «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից թույլ չի տրվում որևէ խախտում, և հետևապես, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունն այլևս տվյալ հարցի վերաբերյալ բողոք, պահանջ չունի»:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

2023 թվականի մարտի 22-ին ընդունված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-108-Ն օրենքն ուժի մեջ է մտել 2023 թվականի մայիսի 13-ին:

Նոր կարգավորումների համաձայն Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման

իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը՝ կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ:

3.1. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետևյալ հերթականությամբ.

1) Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային հեռարձակողների.

2) հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը.

3) մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը.

4) մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը.

5) սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները.

6) միջպետական պայմանագրի հիման վրա՝ Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:»:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած ցանցային օպերատորը վերահաղորդում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ Օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, Օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում են իրավական հետևանքներ և ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում ցանցային օպերատորը պարտավոր էր պահպանել Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Հանձնաժողովը, համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, ուսումնասիրում և պատասխանում կամ եզրակացություն է տալիս Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության վերաբերյալ բողոքներին, առաջարկություններին և հարցումներին:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել հետևյալը.

2023 թվականի հունիսի 07-ին Հանձնաժողով մուտքագրված դիմումով Հեռարձակողը տեղեկացնում է, որ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերությունը տեսալսողական ծրագրերի դասավորվածությունը կատարել է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջի խախտմամբ՝ առաջնահերթությունը տալով «Արմենիա Պրեմիում» տեսալսողական ծրագրին՝ խախտելով Օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Ցանցային օպերատորը Հանձնաժողով ներկայացրած իր պարզաբանմամբ հայտնել է, որ սույն թվականի հունիսի 09-ին՝ ժամը 17:00-ից սկսած, տեսալսողական ծրագրերի հեռարձակումն սկսել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերության «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրեից:

Հեռարձակողը 2023 թվականի հունիսի 16-ին Հանձնաժողով ներկայացրած գրությամբ հայտնել է, որ «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից թույլ տրված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 44-րդ հոդվածի պահանջի խախտումը վերացվել է և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԲ ընկերությունն այլևս տվյալ հարցի վերաբերյալ բողոք, պահանջ չունի:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-րդ մասը սահմանում է.

«Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Օրենքով ժամկետներ սահմանված չեն, ինչպես նաև նշված հարցը տեխնիկական բնույթ է կրում, և Հեռարձակողը այլևս բողոք չունի, ուստի Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը, 44-րդ հոդվածի 3-րդ մասը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Կարճել «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

22 մայիսի 2023թ.
ք. Երևան